նոյն նահատակաց կառուցուած է այս անունման յիշատակարանը։ Այսպիսի պարագայ մը անանախընթաց չէ Ս. Երկրին մէջ։

1925 ին ալ, այս հայկական մոզայիքին մօտերը գտնուած է հայկական Մօրիկ կայսեր, Արապիսոս ծնած քրոջը՝ Անատոլիայի գերեզմանը՝ յունարէն արձանագրութեամբ և մոզայիքով գեղազարդուած(*)։ Այս վերջին գիւտն ալ կ'ապացուցանէ թէ Ս. Պողիկտոսի վանքին մօտ կը թաղուէին Մելիտինէի և շրջակայից այն ուխտաւորները որ կը վախճանէին Երուսաղէմի մէջ։

ԺԵ

ԳԱԶԱՒՈՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ՎԱՆՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Կը փափաքինք գրի առնուլ խորագրովս նշանակուած հայկական վանքի մը պատմականութիւնը Երուսաղէմի մէջ. ան կը գտնուէր Ս. Յարութեան Տաճարին մօտ, ինչպէս կը հաստատէ Անաստաս վրդ. իր Հայ Վանօրէից Ցուցակին մէջ. «Գազաւոնի վանքն որ յանուն սուրբ Հռիփսիմեի եւ Գայիանեի ի մէջ քաղաքին՝ դրանն Յարութեան»։ Այս յիշատակութենէն զատ, դժբախտաբար ո՛եւէ տեղեկութիւն չունիմք անոր մասին. բայց այս յիշատակարանը, ինչպէս անոր կիսաւեր շէնքը արդէն կը հաստատեն նոյն վանքին գոյութիւնը։

Որպէս զի կարենամք նոյն վանքին տեղը ճշդել, հարկ կ'ըլլայ բացատրել Անաստաս վրդ.ի վերոգրեալ փոքր յիշատակարանը. ան կ'ուզէ ըսել թէ Գազաւոնի Ս. Հռիփսիմէի և Գայիանէի անուամբ կառուցուած հայկական վանքը՝ քաղաքին ներքին կողմն էր, և կը գտնուէր Ս. Յարութեան Տաճարին դրան

(*) Տե՛ս ԱՐԵՒ 1926. Թ. 2164, մեր յօդուածը Հայկազն Մօրիկ կայսեր քրոջ գերեզմանը Երուսաղէմայ մէջ խորագրով։